ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 10

ՀՀ «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» ՊՈԱԿ-ի ծրագրի իրականացման

(բյուջետային դասակարգման բաժին - 07, խումբ -06, դաս-01)

«02» դեկտեմբեր 2015 թ.

ք. Երևան

ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության աշխատակազմը (այսուհետ՝ Նախարարություն), ի դեմս Աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա. Գրիգորյանի, որը գործում է Նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և ՀՀ «Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա ի դեմս տնօրեն Հ.Ավետիսյանի, մյուս կողմից, համաձայն <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի <<Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից իրավաբանական անձանց սուբսիդիաների և դրամաշնորհների հատկացման կարգը հաստատելու մասին>> N1937-Ն որոշման, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Պայմանագրով կազմակերպությունը պարտավորվում է կատարել բնածին և տեխնածին աղետների դեպքում արագ արձագանքման ծառայությունների մատուցման կարողությունների զարգացման ծրագրի իրականացման աշխատանքները (այսուհետ՝ Աշխատանքներ), կատարել սույն պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իսկ Նախարարությունը պարտավորվում է Աշխատանքների իրականացման համար Կազմակերպությանը տրամադրել <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքով նախատեսված պետության կողմից դրամաշնորհի հատկացման ձևով ֆինանսական աջակցություն:

1.2 Կազմակերպությունը պարտավոր է Աշխատանքը կատարելիս ստացված և գաղտնի ճանաչված տեղեկությունները հրապարակել միայն Նախարարության համաձայնությամբ:

1.3 Աշխատանքները կատարվում են Պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող Հավելված N 1-ին և Հավելված N 2-ին համապատասխան:

2. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. Օգտագործել Աշխատանքների արդյունքները,

2.1.2.Կազմակերպությունից պահանջել Աշխատանքները կատարել սույն պայմանագրի 4– րդ կետում նշված ժամկետում,

2.1.3.Կազմակերպությունից պահանջել Աշխատանքների կատարման ընթացքի վերաբերյալ ամսական (ձև Հ-2), եռամսակային (Ձև Հ-2 և տեքստային) և տարեկան (Ձև Հ-2 և տեքստային) հաշվետվություն ըստ հավելված N 1-ում նշված աշխատանքների բովանդակության, մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 10-ը,

2.1.4.Կազմակերպությունից պահանջել կատարելու Պայմանագրով նախատեսված պարտականությունները:

2.2. Նախարարությունը պարտավոր է՝

2.2.1 Ընդունել կատարված Աշխատանքների արդյունքը՝ ՀՀ կառավարության 2003 թվականի դեկտեմբերի 24-ի N 1937-Ն որոշմամբ հաստատված կարգին համապատասխան և ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) դրական եզրակացության հիման վրա իրականացնել կազմակերպության կողմից ներկայացված ամսական հայտերի վճարումը:

2.3 Կազմակերպությունը պարտավոր է՝

2.3.1. Պայմանագրի շրջանակներում ստացված ֆինանսական միջոցներն օգտագործել Աշխատանքների իրականացման համար:

2.3.2. Նախարարության հետ համաձայնեցնել երրորդ անձանց պատկանող մտավոր գործունեության պահպանվող արդյունքների օգտագործման, դրանց օգտագործման համար իրավունքների ձեռք բերման անհրաժեշտությունը.

2.3.3. Իր ուժերով և իր հաշվին Աշխատանքների կատարման ընթացքում իր մեղքով թույլտված այն թերությունները, որոնք կարող են հանգեցնել ծրագրով նախատեսված միջոցառումներից շեղումների.

2.3.4. Նախարարությանն անհապաղ տեղեկացնել Աշխատանքների սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ Աշխատանքները շարունակելու աննպատակահարմարության մասին.

2.3.5. Նախարարությանը հանձնել Աշխատանքների արդյունքները չխախտելով այլ անձանց իրավունքները:

2.3.6. Նախարարությանը ներկայացնել հաշվետվություն ՀՀ պետական բյուջեից հատկացված ֆինանսական միջոցների նպատակային օգտագործման վերաբերյալ, ինչպես նաև ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի 2008թ. փետրվարի 4-ի N 80-Ն հրամանով հաստատված ձևերով՝ ամսական (Ձև Հ-2 աճողական), եռամսակային (Ձև Հ-2 աճողական և տեքստային) և տարեկան կտրվածքով (Ձև Հ-2 աճողական և տեքստային) մինչև հաշվետու ամսվա հաջորդող ամսվա 10-ը:

3. Աշխատանքների ֆինանսավորման չափը և կարգը

3.1. Աշխատանքների իրականացման ֆինանսական աջակցությունն ըստ <<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի և Պայմանագրին կից նախահաշվի կազմում է ընդամենը 10.714.400 (տաս միլիոն յոթ հարյուր տասնչորս հազար չորս հարյուր) դրամ:

3.2 Կազմակերպության կողմից Աշխատանքներն իրականացվում են հաշվետու տարվա ընթացքում, իսկ վճարումներն իրականացվում են ամսական՝ կանխավճարային ձևով, յուրաքանչյուր ամսվա առաջին տաս աշխատանքային օրվա ընթացքում, բացառությամբ 2015 թվական հունվար և դեկտեմբեր ամիսների՝ հատկացվելիք գումարը տրամադրվում է համապատասխանաբար փետրվարի առաջին տաս աշխատանքային օրվա և մինչև դեկտեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում:

4. Պայմանագրի գործողության ժամկետը

4.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից, տարածվում է 2015թ. հունվարի 01 -ից հետո ծագած հարաբերությունների վրա և գործում է մինչև 2015թ. դեկտեմբերի 31-ը:

5. Աշխատանքների հանձման և ընդունման կարգը

5.1. Աշխատանքների իրականացման ընթացիկ և վերջնական արդյունքները Կազմակերպության կողմից հանձնվում և Նախարարության կողմից ընդունվում են Կոլեգիալ կառավարման մարմնի դրական եզրակացության հիման վրա:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Կողմերը Պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու դեպքում կրում են պատասխանատվություն ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

7. Վեճերի լուծման կարգը

7.1. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը կատարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. Այլ պայմաններ

8.1. Կազմակերպությունն իրավունք չունի առանց Նախարարության գրավոր համաձայնության Կազմակերպություններին հանձնել Պայմանագրի շրջանակներում կատարված Աշխատանքների արդյունքները:

8.2. Աշխատանքների կատարմանը 3-րդ անձինք կարող են ներգրավվել միայն Նախարարության համաձայնությամբ:

8.3. Պայմանագրի պայմանների փոփոխումը, լրացումը կամ գործողության դադարեցումը իրականացվում է կողմերի գրավոր համաձայնությամբ:

8.4. Պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, 2 (երկու) օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները՝

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ	ԿԱԶՄԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարության	«Աղետների բժշկության տարածաշրջանային կենտրոն» ՊՈԱԿ
ՀՀ,ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ.Ա.Միկոյանի փ.109/8	ՀՀ,ք.Երևան, Դավիթաշեն 4-րդ թաղ.Ա.Միկոյանի փ. 109/13
ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն h/h 90000	Անելիք Բանկ ՓԲԸ Դավթաշեն մ/ճ h/h 11811 001595500
ՀՎՀՀ՝ 02570338	ՀՎՀՀ՝ 01244592
ՀՀ ՏԿԱԻՆ աշխատակազմի ղեկավարի տեղակալ Ա.Գ[illegible]	Տնօրեն Հ.ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված N 1
N_____2015թ.
պայմանագիր
__ _____ 2015թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
ՀՀ ԱԿԵԱՆ կազմի
գլխավոր տնտեսագետ
Հ.Հարությունյան
_____ 2015թ.

ԾԱԽՍԵՐԻ ՆԱԽԱՀԱՇԻՎ

<<Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ>> ծրագրի իրականացման համար /աճողական/

հազ. դրամ

	Անվանումը	1-ին եռամսյակ	1-ին կիսամյակ	9 ամիս	Տարի
	Ընդամենը ծախսեր	1785.7	4464.3	7142.9	10714.4
	այդ թվում				
	Աշխատանքի վարձատրության և դրան հավասարեցված այլ վճարումներ	1785.7	4464.3	7142.9	10714.4

Տնօրեն Հ.Ավետիսյան

Հավելված N 2
N_____2015թ.
պայմանագիր
__ _____ 2015թ.

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
<< Տարածքային բաշխիչ կենտրոն>>ՊՈԱԿ-ի տնօրեն
_____Ս.Հարությունյան
_____ 2015թ.

<<Արտակարգ իրավիճակներում բուժօգնության ծառայություններ>> ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայություններ

	Ծառայության անվանումը
1	Արտակարգ իրավիճակների հետևանքների վերացման համար ընդգրկված անձնակազմի առողջության պահպանումը և բուժօգնության ցուցաբերումը
2	Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության անձնակազմի , նրանց ընտանիքների անդամների, փրկարար ծառայության կենսաթոշակառուների ամբուլատոր, ստացիոնար, սանատոր-կուրորտային, վերականգնողական բժշկական օգնության ու սպասարկման իրականացումը և կազմակերպումը.
3	Փրկարարական ծառայության անցնելու համար դիմող քաղաքացիների, փրկարար ծառայողների, փրկարարական ուսումնական հաստատությունների դիմորդների պիտանիության բժշկական փորձաքնության իրականացում, ռադիոակտիվ նյութերով, իոնիզացնող ճառագայթման աղբյուրներով, էլեկտրոմագնիսական դաշտ ստեղծող սարքավորումներով աշխատելու համար ծառայողների պիտանիության բժշկական փորձաքնության իրականացում, ծառայողների ստացված հիվանդությունների ու վնասվածքների , խեղումների հետևանքների և ծառայության պատճառական կապի որոշում.
4	Սեմինարների, վարժանքների ու դասընթացների միջոցով բժշկների մասնագիտական մակարդակի բարձրացում:

Տնօրեն Հ.Ավետիսյան